Արձանագրություն N 5

<< ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

<< 22>> 02. 2022թ.

Ժամը 14:30

Մասնակցում էին՝

- ՀՀ ոստիկանության ԿՏՏՎ պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Գ. Հակոբյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության ՃՈ ԾԱՏՍ բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Հ. Աբրահամյան,
- ՀՀ ոստիկանության ՃՈ ԾԱՏՍ բաժնի տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ռ. Հայրապետյան,
- ՀՀ ոստիկանության ՏՎ ԳՀ բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ.Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ոստիկանության կարիքների համար կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված << ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

ՀՀ ոստիկանության կարիքների համար 15.11.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ՝ կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության ձեռքբերման նպատակով:

Հայտերի ընդունման վերջնաժամկետին էլեկտրոնային հայտ են ներկայացրել Պելեկա ՍՊԸ-ն և Նիկիտա Մոբայլ ՍՊԸ-ն: Երկու մասնակիցներն էլ գնային առաջարկը ներկայացրել են միավոր գներով և Պելեկա ՍՊԸ-ն համակարգի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից 6.36 (վեց ամբողջ երեսունվեց) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Աճուրդը կազմակերպված է եղել Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Ծառայության նախահաշվային գինը սահմանված է եղել 16 000 000 (տասնվեց միլիոն) ՀՀ դրամ:

24.12.2021թ.-ին «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված կարճ հաղորդագրություններ ուղարկելու ծառայության գնման ընթացակարգի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել էր, որ տեխնիկական բնութագրում առկա են ՀՀ «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող գնման առարկայի բնութագիր, ինչը հանգեցրել է մասնակիցների կողմից բնութագրի թյուրըմբռնման, և գնման առարկային ոչ համապատասխան գնային առաջարկների: Հաշվի առնելով վերոգրյալը և ընտրված մասնակցի հետ միավոր գնով պայմանագրի կնքման անհնարինությունը, գնահատող հանձնաժողովը որոշել էր տվյալ ընթացակարգը համարել չկայացած և ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն պայմանագիր չկնքել: 29.12.2021թ.-ին մրցույթի մասնակից «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել գնահատող հանձնաժողովի կողմից կայացված վերոգրյալ որոշմանը դեմ: 14.01.2022թ.-ին բողոքը քննող անձի կողմից կայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/120 բողոքի վերաբերյալ որոշում, որը հրապարակվել է gnumner.am կայքում 18.01.2022թ.-ին, համաձայն որի «Պելեկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է մասնակի: Հաշվի առնելով բողոքի մասնակի բավարարված լինելու հանգամանքը գնահատող հանձնաժողովի կողմից 26.01.2022թ.-ին հրավիրվել է նիստ: Հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում չեղյալ համարել 24.12.2021թ.-ին «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 3 արձանագրությունը,

սակայն մրցույթի հետագա ընթացքը պարզ չի եղել Պատասխանատու ստորաբաժանման համար՝ բողոքը քննող անձի կողմից կայացված որոշումը ոչ միանշանակ ձևակերպված լինելու պատճառով: ԳԲՔԱ-ԼՕ-2021/120 բողոքի վերաբերյալ բողոքը քննող անձի կողմից կայացված որոշումը հստակ հասկանալու և պարզաբանումներ ստանալու համար գրավոր դիմում է ներկայացվել բողոքը քննող անձին Պատվիրատուի ղեկավարի կողմից 27.01.2022թ.-ին, սակայն գրությունը մնացել է անպատասխան:

07.02.2022թ.-ին գրություն է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն ՝ պատվիրատուի ղեկավարի կողմից, պարզաբանում ստանալու համար, թե կարո՞ղ ենք արդյոք թղթային եղանակով շարունակել «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի չեղարկված ընթացակարգը: 17.02.2022թ.-ին պատասխան գրությունով ՀՀ ֆինանսների նախարարությունից հայտնել են, որ քննարկվող գնման ընթացակարգի մասով էլեկտրոնային աճուրդի համակարգում կատարվել է համապատասխան փոփոխություն, ինչի արդյունքում հնարավոր է շարունակել ընթացակարգը՝ հայտի գնահատման փուլից:

Ելնելով վերոգրյալից ՝ «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՍՄՍ/2022/Հ-4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչում Պելեկա ՍՊԸ-ին:

2. Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը: Անգործության ժամկետի ավարտից հետո Պելեկա ՍՊԸ-ի հետ կկնքվի պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 2, դեմ 0, բացակա 1:

Հանձնաժողովի նախագահ՝	*ներկա չէ*	Գ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝		Հ. Աբրահամյան
		Ռ. Հայրապետյան
Քարտուղար՝		Հ. Ասատրյան